

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՌՆՈՒԴ ՍԱՄՎԵԼԻ

**ԲԺՇԿԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐԿԱԴԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԺԲ.00.04 – Դատական իրավունք (դատարանակազմություն,
քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն,
կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն,
օպերատիվ հետախուզական գործունեության տեսություն)
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2020

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ВАРДАНЯН АРНОЛЬД САМВЕЛОВИЧ

**ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ
ПРИНУДИТЕЛЬНЫХ МЕР МЕДИЦИНСКОГО ХАРАКТЕРА
В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РА**

АВТОРЕФЕРАТ

**диссертации на соискание ученой степени кандидата юридических
наук по специальности 12.00.04 – Судебное право (судоустройство,
гражданский процесс, уголовный процесс, криминалистика,
судебная экспертиза, адвокатура, теория оперативно-розыскной
деятельности)**

Ереван-2020

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

- Գիտական ղեկավար՝** իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ. Հ. Ղուկասյան
- Պաշտոնական ընդդիմախոսներ՝** իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս. Ա. Դիլբանդյան
- իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Դ. Մ. Մելքոնյան
- Առաջատար կազմակերպություն՝** Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի հուլիսի 2-ին՝ ժամը 12⁰⁰-ին, Երևանի պետական համալսարանում գործող՝ ԲՈԿ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2020թ. մայիսի 22-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ **S. Հ. Սուջյան**

Тема диссертации утверждена в

Ереванском государственном университете

Научный руководитель: кандидат юридических наук, доцент Г.Г. Гукасян

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор С.А. Дилбандян
кандидат юридических наук, доцент Д.М.Мелконян

Ведущая организация: Российско-армянский университет

Защита состоится 2-ого июля 2020 г. в 12⁰⁰ часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 22-ого мая 2020 года.

Ученый секретарь специализированного совета, кандидат юридических наук, доцент **T. О. Суджян**

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Իրավունքի գերակայության սկզբունքի վրա հիմնված պետության առաջնային մարտահրավերներից է հասարակության խոցելի խմբերի իրավունքների և իրավաչափ շահերի արդյունավետ պաշտպանությունը: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ քրեական դատավարությունում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների (այսուհետ՝ նաև ԲԲՀՄ) կիրառման հատուկ վարույթի սահմանմամբ պետությունը նախատեսել է մի շարք հատուկ իրավական երաշխիքներ, որոնք ուղղված են նրանց պաշտպանությանը: Սակայն, ԲԲՀՄ-ի կիրառման վարույթը, որի շրջանակներում բժշկական բնույթի իրավական ներգործության միջոցի նշանակմամբ կանխվում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանցից սպառնացող վտանգը և ապահովում հասարակության այլ անդամների անվտանգությունը, գործնականում պարունակում է մի շարք հիմնախնդիրներ:

Պետք է փաստել, որ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթը հայրենական գրականությունում գրեթե ուսումնասիրված չէ, ըստ էության բացակայում են այդ վարույթի առանձնահատկություններին նվիրված հիմնարար գիտական աշխատանքներ, որոնք մի կողմից վեր կհանեին հատուկ վարույթի տեսական հիմունքները, մյուս կողմից՝ կառաջարկեին իրավակիրառ պրակտիկայում ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի ընթացքում ծագող հիմնախնդիրների համակարգային լուծումներ: Ընդ որում, թեև դատարաններում քննվող գործերի ընդհանուր թվում ԲԲՀՄ գործերն ունեն առավել սահմանափակ քանակ, սակայն համընդգրկուն ուսումնասիրությունների բացակայության պատճառով ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի առանձին հարցերի կապակցությամբ պրակտիկայում ներկայումս ձևավորված են ոչ միասնական լուծումներ, որոնք որոշ դեպքերում վտանգում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքներն ու իրավաչափ շահերը:

Բացի այդ, մի շարք հիմնախնդիրների առկայության պայմաններում ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի վերաբերյալ կարգավորումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՔԴՕ) ընդումից ի վեր էական զարգացում չեն ապրել: Մինչդեռ, հարկ է նկատել, որ վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետությունը միացել է մի շարք միջազգային պայմանագրերի, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ա-

զատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա)՝ ստանձնելով համապատասխան միջազգային պարտավորություններ: Այս պայմաններում ԲԲՀՄ-ի կիրառման վարույթին նվիրված քրեադատավարական կարգավորումների զգալի մասն իրավունքի զարգացման ներկայիս ժամանակաշրջանում չի համապատասխանում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշներին:

Ավելին, վերջին տարիների ընթացքում ՀՀ սահմանադրական դատարանի և վճռաբեկ դատարանի կողմից կայացվել են ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի առանձին հարցերին նվիրված մի շարք որոշումներ, որտեղ արտահայտված դիրքորոշումների կենսագործման կապակցությամբ իրավակիրառ պրակտիկայում ևս ծագում են հիմնախնդիրներ:

Մինևսյն ժամանակ, հարկ է նշել, որ ներկայումս շրջանառության մեջ է գտնվում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ նաև ՔԴՕ նախագիծ), որտեղ առաջարկվող նոր լուծումների հետ մեկտեղ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի վերաբերյալ կարգավորումները որոշ դեպքերում նույնանում են գործող կարգավորումների հետ:

Արդյունքում, վերոնշյալը ցույց է տալիս ԲԲՀՄ-ի վարույթը համակարգային ուսումնասիրության ենթարկելու, ՔԴՕ նախագծի օրենսդրական կարգավորումները գիտական քննարկման առարկա դարձնելու, հատուկ վարույթի տեսական հիմունքներն ու գործնական հիմնախնդիրները վեր հանելու, միջազգային չափանիշներին համապատասխան նոր լուծումներ առաջարկելու անհրաժեշտությունը, ինչը նաև վկայում է հետազոտության արդիականության մասին:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի համակարգային ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, տեսական և գործնական հիմնախնդիրների վերհանումը, այս հատուկ վարույթի վերախմաստավորումը, շրջանառության մեջ տեսական նոր դրույթների, եզրույթների և չափորոշիչների ներդրումը, կատարված համալիր հետազոտության արդյունքների հիման վրա օրենսդրության և պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

Նշված նպատակին հասնելու համար խնդիր է դրվել.

- նախանշել ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի՝ ռոմանոգերմանական և

անգլոսաքսոնական իրավական համակարգերի հայեցակարգային առանձնահատկությունները,

- հստակեցնել ԲԲՀՄ-ի կիրառման հատուկ վարույթի իրավական բնույթը, դատավարական նշանակությունը, հարաբերակցությունն ընդհանուր հիմունքներով անցկացվող վարույթի հետ,

- բացահայտել փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու, ինչպես նաև անմեղսունակության վիճակում քրեական օրենքով արգելված արարք կատարած և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթ հարուցելու, անվտանգության միջոցներ կիրառելու հիմքերի և պայմանների շրջանակը,

- որոշակիացնել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի դատավարական կարգավիճակը, նրա իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության երաշխիքների շրջանակը,

- վեր հանել ԲԲՀՄ-ի կիրառման մինչդատական և դատական վարույթների ընթացքում ծագող տեսական և գործնական հիմնախնդիրները՝ ուսումնասիրելով դրանց առնչությամբ ձևավորված դատական պրակտիկան և միջազգային փորձը,

- համեմատաիրավական վերլուծության ենթարկել ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի վերաբերյալ գործող ՔԴՕ-ի և նոր ՔԴՕ նախագծի կարգավորումները,

- կատարված հետազոտության արդյունքների հիման վրա մշակել համապատասխան հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ԲԲՀՄ-ի կիրառման կապակցությամբ ծագող դատավարական հարաբերություններն են: Հետազոտության առարկան ԲԲՀՄ-ի նշանակման հարաբերությունները կարգավորող միջազգային և ներպետական իրավական նորմերն են, ՔԴՕ նախագծի կարգավորումները, իրավակիրառ պրակտիկան, միջազգային փորձը և դոկտրինալ աղբյուրները:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի տեսական և գործնական հիմնահարցերն առավելապես հետազոտվել են արտասահմանյան հեղինակների գիտական աշխատություններում: Այդ աշխատությունների շարքում հատկապես պետք է առանձնացնել Մ.Ֆ. Բուֆետովայի, Պ.Ա. Կոլմակովի, Ռ.Մ.

Շագենայի, Ե.Զ. Տոռչկինի ու Ա.Ս. Զախատովի, Բ.Ա. Սպասեննիկովի, Ա.Վ. Լենսկիի ու Յու.Կ. Յակիմովիչի և այլոց աշխատությունները: Չնայած դրան, հարկ է նկատել, որ հայրենական դատավարագիտությունում դեռևս առկա է ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի գիտագործնական առանձնահատկությունների համակարգային ուսումնասիրությանը նվիրված աշխատություն:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության իրավական և փորձառական հիմքը կազմել են ԲԲՀՄ-ի կիրառման վարույթին առնչվող ՀՀ և այլ պետությունների նորմատիվ իրավական ակտերը, դատական պրակտիկայի նյութերը՝ այդ թվում՝ առաջին ատյանի դատարանի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Պայմանավորված հետազոտության նպատակով և խնդիրներով՝ այն իրականացվել է համընդհանուր՝ դիալեկտիկական և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի և սինթեզի, ինչպես նաև մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և իրավահամեմատական մեթոդների կիրառմամբ:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսությունը հայրենական իրավագիտության առաջին համապարփակ և ամբողջական գիտահետազոտական ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվել հնարավորինս համալիր և բազմակողմանի քննարկել ու վերլուծել ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի տեսական և գործնական հիմնահարցերը: Ընդ որում, նշված վերլուծությունները կատարվել են հիմնվելով ՀՀ ՔԴՕ-ի և նոր ՔԴՕ նախագծի, համապատասխան ոլորտներին վերաբերող իրավական ակտերի, օտարերկրյա պետությունների քրեադատավարական օրենսդրությունների և դատական պրակտիկայի համեմատաիրավական վերլուծության, տարբեր աղբյուրներում տեղ գտած գիտական մոտեցումների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների, դատական պրակտիկայի, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը նվիրված միջազգային փաստաթղթերի վրա:

Հետազոտվել են հայրենական դատավարական գրականության մեջ չուսումնասիրված այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ԲԲՀՄ-ի կիրառման վա-

րույթի բնույթը, հետապնդվող նպատակը, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի դատավարական կարգավիճակը, իրավունքների ծավալը, ԲԲՀՄ-ի կիրառման վարույթ հարուցելու, անվտանգության միջոցներ կիրառելու հիմքերի և պայմանների շրջանակը: Առաջին անգամ համալիր ուսումնասիրման են ենթարկվել ԲԲՀՄ կիրառման դատական վարույթի նախապատրաստմանը, առարկային և սահմաններին վերաբերող մի շարք խնդրահարույց հարցեր: Արդյունքում, կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել են օրենսդրական ու գործնական առաջարկներ: Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում:

Պաշտպանության առաջ քաշվող դրույթները:

1. Գործող ՔԴ-ով նախատեսված՝ անմեղսունակ անձանց և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ ԲԲՀՄ-ի կիրառման երկու հատուկ վարույթները չունեն այն աստիճան էական և կայուն առանձնահատկություններ, որոնք կարող էին հիմք հանդիսանալ դրանք միմյանցից առանձին վարույթների մակարդակով կարգավորելու համար:

Մասնավորապես, անմեղսունակ անձանց և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթների հարուցման հիմքն ու պայմաններն ըստ էության նույնանում են: Այսպես, եթե անմեղսունակ անձանց նկատմամբ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի հարուցման հիմքը քրեական օրենքով արգելված ենթադրյալ արարքը կատարելու պահին մեղսունակությունը բացառող հոգեկան հիվանդությամբ տառապելն է, ապա դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ հատուկ վարույթի դեպքում՝ հիմքը քրեական օրենքով արգելված ենթադրյալ արարքը կատարելուց հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդանալն է: ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի հարուցման պայմաններն ինչպես անմեղսունակ, այնպես էլ դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց դեպքում ներառում են քրեական գործ հարուցելու մասին որոշման և անձի հոգեկան հիվանդության վերաբերյալ փորձագիտական եզրակացության առկայությունը:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ անմեղսունակ անձանց և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ ԲԲՀՄ-ի կիրառման հատուկ վարույթների միջև առկա տարբերություններն

առավելապես արտահայտվում են ապացուցման առարկայում և դրա շրջանակներում հաստատված փաստական հանգամանքներից բխող իրավական հետևանքների ծավալում, ինչն ինքնին հիմք չէ դրանք միմյանցից առանձին վարույթների մակարդակով սահմանազատելու համար: Ուստի, անմեղունակ անձանց և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ ԲԲՀՄ-ի կիրառման հատուկ վարույթները մեր համոզմամբ ենթակա են ունիֆիկացման:

2. Փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու անհրաժեշտությունը պետք է ունենա մասնագիտական հիմնավորում: Անձի հնարավոր հոգեկան հիվանդությամբ տառապելու վերաբերյալ կասկածները, ինչպես նաև դրանք ազատությունից զրկելու հետ չկապված՝ ամբուլատոր (արտահիվանդանոցային) ձևով փորձաքննության անցկացման միջոցով գնահատելու անհնարիությունը պետք է հավաստվի համապատասխան մասնագիտական հիմնավորմամբ: Ստացիոնար փորձաքննության անցկացման ձևի ընտրությունը պետք է լինի որպես վերջին միջոց (*last resort*), երբ անձի հոգեկան վիճակի պարզումը փորձաքննության այլ՝ անձի իրավունքների նկատմամբ առավել նվազ միջամտություն դրսևորող ձևի կիրառմամբ անցկացնելը կլինի անհնար:

3. Փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու և նույն ժամանակահատվածում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու ձևով անձի ֆիզիկական ազատությունը սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցների կրկնակի կիրառումն անթույլատրելի է: Նկատի ունենալով, որ անձին բժշկական հաստատությունում տեղավորելու դատավարական հարկադրանքի միջոցի կիրառմամբ հնարավոր է հասնել անձի հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի դրսևորումը չեզոքացնելու հետապնդվող նպատակին, այդ նույն նպատակի կենսագործմանն ուղղված կալանավորում դատավարական հարկադրանքի միջոցի կիրառումը դառնում է առարկայազուրկ: Այսինքն՝ անձի ֆիզիկական ազատությունը սահմանափակող մի քանի դատավարական հարկադրանքի միջոցների միաժամանակյա կիրառումն անընդունելի է, երբ կիրառված դատավարական հարկադրանքի միջոցներից յուրաքանչյուրը հավասարապես հնարավորություն է տալիս չեզոքացնելու անձի հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկն այդ միջոցի կիրառման ողջ ժամանակահատվածում: Հետևաբար, կալանավորման կիրառումը չպետք է

զուգակցվի փորձաքննության ենթարկելու նպատակով անձին բժշկական հաստատությունում տեղավորելու հետ:

Միևնույն ժամանակ, փորձաքննության ենթարկված մեղսունակ անձին կրկին կալանավորելու իրավական հնարավորությունը գործնականում ապահովելու նպատակով գտնում ենք, որ անհրաժեշտ է գործող ՔԴՕ-ում նախատեսել հատուկ կարգավորում այն մասին, որ կալանքի տակ գտնվող անձին փորձաքննության ենթարկելու համար բժշկական հաստատությունում տեղավորելիս նրան կալանքի տակ պահելու որոշման իրավական գործողության ժամկետը կասեցվում է: Այդպիսի հատուկ կարգավորումը մի կողմից կբացառի անձի նկատմամբ ֆիզիկական ազատությունը սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցների կրկնակի կիրառումը, մյուս կողմից կփարատի այն մտահոգությունները, որոնք կարող են առաջանալ ՀՀ ՔԴՕ 142-րդ հոդվածի 4-րդ մասի մեկնաբանման և փորձաքննության ենթարկված մեղսունակ անձին կրկին կալանավորելու միջնորդություն ներկայացնելու հնարավորության կապակցությամբ: Հետևաբար, անձին փորձաքննության ենթարկելու համար բժշկական հաստատությունում տեղավորելիս օրենքի ուժով (*ex lege*) նրան կալանքի տակ պահելու որոշման իրավական գործողության ժամկետի կասեցման վերաբերյալ գործող ՔԴՕ-ում հատուկ կարգավորում նախատեսելը կարող է լինել բարձրացված խնդրի լուծման արդյունավետ միջոց:

4. Անձի հոգեկան հիվանդությամբ տառապելու վերաբերյալ հիմնավոր կասկածների ծագման պահից մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդումը պետք է վերաճի հանրային քրեական հետապնդման: Այսինքն՝ տուժողն այլևս չպետք է հանդես գա որպես քրեական հետապնդումը տնօրինելու իրավասությամբ օժտված դատավարական սուբյեկտ, քանի դեռ նշանակված փորձաքննությամբ չեն հերքվի անձի՝ հոգեկան հիվանդությամբ տառապելու վերաբերյալ հիմնավոր կասկածները: Քրեական հետապնդման տեսակի փոփոխությունը քրեական վարույթի ավելի վաղ՝ անձի հոգեկան առողջության վերաբերյալ փորձաքննության նշանակման պահի հետ պայմանավորելու հիմքում ընկած է այն հիմնավորումը, որ անձի ինքնուրույն և ազատ կամահայտնություն պահանջող հաշտությունը չի կարող կնքվել, քանի դեռ ենթադրյալ հանցանք կատարած անձի՝ նշված հատկանիշներին համապատասխանող կամահայտնության արտահայտման հնարավորությունը դրված է հիմնավոր կասկածի տակ և բացակայում է այն

հերքող մասնագիտական օբյեկտիվ եզրակացությունը: Սկսած այն պահից, երբ պարզվում է անձի՝ հոգեկան հիվանդությամբ տառապելու փաստը և դրանով պայմանավորված՝ իր կամ հասարակության համար վտանգ ներկայացնելու հնարավորությունը, հանրային շահը պահանջում է շարունակել գործի վարույթը և միջոցներ ձեռնարկել այդ վտանգը կանխելու համար՝ անկախ այն հանգամանքից, որ տուժողն այլևս հետաքրքրված չէ իր մասնավոր շահի պաշտպանությամբ:

Վերը ներկայացված դատողությունների ներքո մենք գտնում ենք, որ ՀՀ ՔԴՕ-ի 33-րդ հոդվածում հանրային և մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդման տեսակներից բացի, որպես քրեական հետապնդման ինքնուրույն տեսակ, պետք է նախատեսել նաև դրանց խառը՝ մասնավոր-հանրային տեսակը: Այդ պայմաններում քրեական հետապնդման առնչությամբ տուժողի տնօրինչական լիազորությունները կսահմանափակվեն բացառապես քրեական վարույթի նախաձեռնման հարցի լուծմամբ: Արդյունքում, հոգեկան հիվանդությամբ տառապելու հիմնավոր կասկածների ծագման պահից, երբ վարույթն իրականացնող մարմինը կնշանակի փորձաքննություն, մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդումը կվերաճի քրեական հետապնդման խառը՝ մասնավոր-հանրային տեսակի: Նշվածը նաև գործնականում կբացառի այնպիսի խնդրահարույց իրավիճակները, երբ փորձաքննության անցկացման ընթացքում՝ մինչև ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի հարուցումը, մեղադրյալը և տուժողը կհաշտվեն միմյանց հետ կամ տուժողը հետ կվերցնի իր ներկայացրած բողոքը:

5. Թեև գործող ՔԴՕ-ում օգտագործվում են «անմեղսունակության վիճակ» կամ «անմեղսունակների գործ» արտահայտությունները, սակայն դրանք չեն կարող վկայել անմեղսունակության՝ որպես առանձին դատավարական կարգավիճակի գոյության մասին: Անմեղսունակությունն առավելապես կարող է դիտարկվել որպես իրավական վիճակ, որը բնութագրում է անձի հոգեվիճակը քրեական օրենքով արգելված արարքի կատարման պահին, այլ ոչ թե նրա՝ իրավունքների ծավալը կանխորոշող դատավարական կարգավիճակը քրեական վարույթի հետագա ընթացքում: Հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի համեմատ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձը, ում մեղսագրվում է քրեական օրենքով արգելված արարքի կատարում, չի կարող ունենալ առավել սահմանափակ ծավալի իրավունքներ միայն այն պատճառով, որ տառապում է հոգեկան հիվանդությամբ:

յամբ: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի դատավարական կարգավիճակն ըստ էության չի տարբերվում մեղադրյալի դատավարական կարգավիճակից: Այսինքն՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձն օժտված է քրեադատավարական լիարժեք իրավասուբյեկտությամբ, իր համար սահմանված լրացուցիչ երաշխիքների հաշվառմամբ, մեղադրյալի հետ հավասար հիմունքներով կարող է օգտվել նախատեսված բոլոր դատավարական իրավունքներից:

6. Անձի անմեղսունակությունն ինքնին չի ենթադրում նաև անգործունակություն և անձի մեղսունակության որոշման վերաբերյալ փորձագիտական եզրակացության հետևությունները չեն կարող օգտագործվել որպես հիմք նրան անգործունակ ճանաչելու համար: Այլ կերպ, անմեղսունակության վիճակը դեռևս չի նշանակում, որ անձը պետք է պարտադիր ճանաչվի նաև անգործունակ: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների համաձայն՝ գիտականորեն հիմնավորված է, որ անմեղսունակության և անգործունակության վիճակները համարժեք չեն, կրում են ինքնավար բնույթ և որոշվում են տարբեր բանաձևերով, մեկի առկայությունը չի կարող նախապայման դիտարկվել մյուսը հաստատելու համար: Ուստի, անմեղսունակության վերաբերյալ փորձագիտական եզրակացության կիրառմամբ անձին անգործունակ ճանաչելու և այդ կերպ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի մասնակցություն պահանջող քննչական կամ այլ դատավարական գործողություններն առանց նրա մասնակցության իրականացնելն օրինականացնելն անընդունելի է:

7. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձն իրավունք ունի հոգեպես առողջ անձի հետ հավասար հիմունքներով քրեական դատավարությունում տալ ցուցմունքներ, որոնց արժանահավատությունը և վերաբերելիությունը պետք է գնահատվի գործով ձեռքբերված այլ ապացույցների, այդ թվում՝ հոգեկան հիվանդությամբ տառապելու վերաբերյալ փորձագիտական եզրակացության հետ համակցության մեջ: Այսինքն՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին հարցաքննելու անհրաժեշտության դեպքում նրա կողմից ներկայացվող տվյալները պետք է արձանագրվեն ոչ թե բացատրությունների, այլ ապացուցողական նշանակություն ունեցող ցուցմունքների ձևով: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի ցուցմունքներն օրենքի ուժով անթույլատրելի ապացույց համարվել չեն կարող, քանի որ հոգեկան հիվանդությամբ տառապելու հանգամանքն առա-

վելապես կարող է ազդեցություն ունենալ հայտնված տեղեկությունների բովանդակության վրա, բայց ոչ երբեք դիտարկվել որպես դատավարական իրավախախտում, որը կհանգեցնի ապացույցի անթույլատրելիության: Այդ պատճառով պետք է հրաժարվել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի մասնակցությամբ ձեռքբերված նյութերն անթույլատրելի համարող քրեադատավարական կարգավորումներից՝ հաշվի առնելով, որ ինքնին հոգեկան հիվանդությամբ տառապելու հանգամանքը չի կարող *a priori* դրանք համարել անթույլատրելի:

8. ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի շրջանակներում ներկայացված քաղաքացիական հայցի ենթակայության հարցը պետք է լուծել ելնելով քրեական դատավարությունում մայր գործի հետ մեկտեղ քաղաքացիական հայցը քննության առնելու նպատակներից, ինչպես նաև քննարկվող խնդրին առնչվող կարգավորումների վերաբերյալ իրավունքի զարգացման ներկայիս ուղղություններից: Քրեական վարույթի շրջանակներում անձին անմեղսունակ ճանաչելն ու օրենքի ուժով քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելը չի կարող առհասարակ բացառել ԲԲՀՄ-ի կիրառման վարույթում քաղաքացիական հայցի քննության հնարավորությունը: Հաշվի առնելով մի կողմից պատճառված վնասի հատուցման՝ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված կարգավորումների առանձնահատկությունները, մյուս կողմից՝ հատուկ վարույթի շրջանակներում քաղաքացիական հայցի առարկան և հիմքը քննության առնելու և պարզելու դատարանի հնարավորությունները, գտնում ենք, որ քաղաքացիական հայցը կարող է քննության առնվել ԲԲՀՄ-ի կիրառման վարույթում՝ երաշխավորելով տուժողի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը և զերծ պահելով նրան առանձին քաղաքացիական հայցի ներկայացմամբ երկրորդային զոհացման ենթարկվելու վտանգից:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների նշանակությունն այն է, որ հայրենական դատավարական իրավունքում առաջին անգամ իրականացվել է ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի գործնական խնդիրների վերհանմանն ու դրանց լուծման ուղիների քննարկմանը նվիրված համալիր հետազոտություն: Ատենախոսության մեջ արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում և այն դասընթացներում, որոնց առարկան առնչվում

է ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի քրեադատավարական հիմնահարցերի ուսումնասիրությանը: Կատարված ուսումնասիրությունները, դրանց հիման վրա ներկայացված առաջարկությունները և հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ գործունեության մեջ, ինչպես նաև նպաստել դատական պրակտիկայի կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ամսագրերում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ ատենախոսի կողմից ներկայացվել են զեկույցներում և ամբիոնում պատրաստված գիտական հաղորդումներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 11 պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված գրականության, իրավական ակտերի և պրակտիկ նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ, փորձառնական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ներկայացվում են հետազոտության տեսական և գործնական նշանակությունը և հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը՝ «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի իրավական բնույթը» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման ընթացակարգը որպես քրեական վարույթի հատուկ դրսևորում» վերտառությամբ, հեղինակը քննարկել է ԲԲՀՄ-ի նշանակումը քրեադատավարական ընթացակարգի կիրառմամբ կազմակերպելու հիմնավորվածությունը և ուսումնասիրել ԲԲՀՄ-ի նշանակման քրեադատավարական մոդելը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հատուկ վարույթի տեսակները» վերտառությամբ, հեղինակը վերլուծել է ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի երկու տեսակները, անդրադարձել դրանց հարուցման հիմքին և պայմաններին:

Երկրորդ գլուխը՝ «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման մինչդատական վարույթը» վերտառությամբ, բաղկացած է վեց պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելը» վերտառությամբ, հեղինակը վերլուծության է ենթարկում նշված դատավարական հարկադրանքի միջոցի բնույթը, կիրառման հիմքերի ու պայմանների շրջանակը, դրա նկատմամբ նախնական դատական վերահսկողության ընթացակարգի առանձնահատկությունները:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման ընդհանուր հիմունքները» վերտառությամբ, հեղինակը քննարկել է ԲԲՀՄ-ի կիրառման վարույթում քրեական հետապնդման իրականացման հարցը, անդրադարձել տուժողի բողոքը հետ վերցնելու, տուժողի հետ հաշտվելու, վաղեմության ժամկետներն անցնելու, համաներման ակտի ընդունման կամ գործուն գոջալու հիմքերով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորությանը:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին մասնակցող անձի դատավարական կարգավիճակը» վերտառությամբ, հեղինակը վերլուծության է ենթարկել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի դատավարական կարգավիճակի հիմնահարցերը, անդրադարձել նրա կողմից տրված ցուցմունքները որպես ապացույց դիտարկելուն, ինչպես նաև նրան քրեական դատավարությունում անգործունակ ճանաչելու ընթացակարգին՝ դրանց առնչությամբ ձևավորելով հեղինակային դիրքորոշումներ:

Երկրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Անվտանգության միջոցների կիրառման իրավական երաշխիքները» վերտառությամբ, հեղինակը քննարկման առարկա է դարձրել ԲԲՀՄ կիրառման վարույթում անվտանգության միջոցների բնույթը, դրանց կիրառման հիմքերի և պայմանների շրջանակը, ինչպես նաև նախնական դատական վերահսկողության ա-

ռանձնահատկությունները:

Երկրորդ գլխի հինգերորդ պարագրաֆում՝ «Ապացուցման առարկան բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի մինչդատական նախապատրաստման ընթացքում» վերտառությամբ, հեղինակը վերլուծել է ԲԲՀՄ-ի կիրառման մինչդատական վարույթում ապացուցման առարկայի առանձնահատկությունները, անդրադարձել պարզման ենթակա հանգամանքների շրջանակին:

Երկրորդ գլխի վեցերորդ պարագրաֆում՝ «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի մինչդատական նախապատրաստման ավարտը» վերտառությամբ, հեղինակը քննարկել է ԲԲՀՄ-ի կիրառման վարույթն ավարտելու իրավական հնարավորությունները, անդրադարձել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին ռեաբելիտացիայի իրավունք տրամադրելու հիմնահարցին:

Երրորդ գլուխը՝ «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման դատական վարույթը» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման դատական վարույթի նախապատրաստումը» վերտառությամբ, հեղինակը վերլուծել է դատարանի կողմից դատավարական այդ փուլում լուծման ենթակա հարցերի շրջանակը:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման դատական վարույթը» վերտառությամբ, հեղինակը, քննարկել է անմեղսունակության փաստի հաստատման և ԲԲՀՄ նշանակման առանձնահատկությունները, ինչպես նաև վերլուծել ԲԲՀՄ-ի կիրառման վարույթում քաղաքացիական հայցի քննության հնարավորությունը, ԲԲՀՄ կիրառման գործերով դատական ակտի կայացման առանձնահատկությունները:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց գործերով դատական վարույթը» վերտառությամբ, հեղինակը քննարկել է գործող դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց գործերով մեղավորության հարցի քննարկման շրջապտույտի հիմնախնդիրը և անդրադարձել այդ խնդրի լուծման արդյունավետ ուղիներին:

Ատենախոսության եզրակացություններում, ի լրումն պաշտպանութ-

յան ներկայացվող դրույթների, կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները:

1. Անմեղսունակ անձինք իրենց վարքագծով վնաս են պատճառում քրեական օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերությունների ամբողջությանը, որն էլ հենց հիմք է հանդիսանում քրեական վարույթ նախաձեռնելու և քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ նրանց նկատմամբ իրավական ներգործության միջոցներ կիրառելու համար: Ընդ որում, թեև ԲԲՀՄ-ով սոցիալական արդարությունը չի վերականգնվում, ուղղման գործընթաց չի ապահովվում, սակայն կանխվում է հետագա հանցագործությունների կատարումը (մասնավոր պրևենցիայի դրսևորմամբ), ինչը քրեական օրենքով հետապնդվող նպատակներից է: Այլ կերպ, իրականացվում է պրևենտիվ արդարադատություն, որի արդյունքում անձը ենթարկվում է սոցիալական ռեաբիլիտացիայի և բուժվում է, որն էլ իր հերթին հանգեցնում է նրա կողմից հետագայում հակաիրավական այլ արարքների կատարման կանխմանը: Նման պայմաններում պետք է փաստել, որ քրեական օրենքով հետապնդվող բոլոր նպատակներին համահունչ չլինելը, քրեաիրավական հետևանքներ չառաջացնելը թեև վկայում են այն մասին, որ ԲԲՀՄ-ը դասական իմաստով քրեաիրավական բնույթ չունեն, սակայն դրանց կիրառման հիմքում ընկած՝ քրեական օրենքով արգելված արարքի կատարման փաստը, վկայում է այն մասին, որ ԲԲՀՄ-ը ենթակա են նշանակման քրեական դատավարության շրջանակներում:

2. Մայրցամաքային իրավական համակարգի երկրներում դեռևս գերիշխող նյութական (օբյեկտիվ) ճշմարտության տեսությամբ պայմանավորված՝ ԲԲՀՄ-ի կիրառման հայրենական քրեադատավարական մոդելի շրջանակներում անձի անմեղսունակության ապացուցման բեռի բաշխման կանոնները, անձի մեղսունակության կանխավարկածի սկզբունքի գործողության պայմաններում, կողմերի միջև էականորեն նվազեցնում են մրցակցությունը և ըստ էության նաև այն դարձնում առարկայազուրկ: Նման պայմաններում, անմեղսունակության փաստի հաստատման և ԲԲՀՄ-ի նշանակման գործունեությունն ըստ էության նաև դասական իմաստով արդարադատության իրականացում համարվել չի կարող՝ հաշվի առնելով, որ նշված գործունեությունը, նվազագույնի հասցված մրցակցության պայմաններում, ըստ էության չի պարունակում նաև այդպիսի վեճ, քանի որ քրեական օրենքով արգելված արարքի կատարման փաստի արձանագրման դեպքում միևնույն է

անձն ըստ էության անվերապահորեն ազատվում է քրեական պատասխանատվությունից և պատժից:

3. Պետք է հրաժարվել քրեական դատավարությունում ՀՀ ՔԴՕ 108-րդ հոդվածի ուժով որոշ փաստական տվյալների, այդ թվում՝ փորձագիտական եզրակացությունների ձեռքբերման պահանջ ամրագրելու մոտեցումից: Քրեական դատավարությունում ապացուցման միջոցների ընտրությունը պետք է թողնել քննիչի ազատ հայեցողությանը և պատասխանատվությանը՝ հաշվի առնելով նաև, որ ընտրված միջոցների օրինականության նկատմամբ հսկողություն է իրականացնում դատախազը: Հակառակ պարագայում, կարժեզրկվի քննիչի դատավարական ինքնուրույնությունը:

4. Անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայությունը փորձաքննության ենթարկելու նպատակով նրան բժշկական հաստատությունում տեղավորելու պայման է: Ուստի, գտնում ենք, որ ՀՀ ՔԴՕ-ի 280-րդ հոդվածում պետք է նախատեսել, որ փորձաքննության ենթարկվելու համար բժշկական հաստատությունում կարող են տեղավորվել միայն մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձինք, ինչը նաև կլինի հիմնարար երաշխիք նրանց իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության համար:

5. Փորձաքննության նշանակման համար հիմք հանդիսացած անձի հոգեկան հիվանդությամբ տառապելու ենթադրությունն ինքնին վկայում է, որ ողջամտորեն անձի համար պետք է դժվար լինի ինքնուրույն իրականացնել պաշտպանության իր իրավունքը: Ուստի, փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու միջնորդության քննությանը պաշտպանը պետք է ունենա պարտադիր մասնակցություն: Այլ կերպ, այն պետք է լինի պարտադիր պայման փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու հարցը քննարկելիս:

6. Փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու նկատմամբ նախնական դատական վերահսկողության շրջանակն ըստ էության նույնանում է անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության առարկայի հետ և ներառում է մեղսագրվող հանցանքը կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության ստուգումը:

7. Անձի ազատության իրավունքի արժեքանական նշանակությունից, դրա պաշտպանության անհրաժեշտությունից ելնելով՝ անձին փորձաքննության ենթարկելու համար բժշկական հաստատությունում տեղավորելու ժամկետային սահմանափակման ու դրա հնարավոր երկարացման վերաբերյալ ներկայացված ընթացակարգը պետք է ստանա օրենսդրական ամրագրում և կիրառվի պրակտիկայում: Գտնում ենք, որ հայրենական ՔԴՕ-ում փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու նվազագույն ժամկետ պետք է սահմանել 24-օրը՝ անհրաժեշտության դեպքում այն երկարացնելու հնարավորությամբ:

8. Անձի հոգեկան հիվանդությամբ տառապելու վերաբերյալ հիմնավոր կասկածների ծագման պահից նրա նկատմամբ քրեական հետապնդումը չի կարող դադարեցվել և վերջինս չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից տուժողի բողոքը հետ վերցնելու, տուժողի հետ հաշտվելու, վաղեմության ժամկետներն անցնելու, համաներման ակտի ընդունման կամ գործուն գղջալու հիմքերով:

9. Թեև անվտանգության միջոցներն ըստ էության կիրառվում են որպես խափանման միջոցների այլընտրանք, սակայն դրանք չեն կարող նույնացվել խափանման միջոցների հետ: Անվտանգության միջոցները պետք է դասել ինքնուրույն դատավարական հարկադրանքի միջոցների շարքին:

Անվտանգության միջոցների կիրառման պայմաններն են ԲԲՄ-ի կիրառման վարույթի հարուցման մասին որոշման, անձի՝ հոգեկան հիվանդությամբ տառապելու հանգամանքը հավաստող փորձագիտական եզրակացության, ինչպես նաև քրեական օրենքով արգելված արարք կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայությունը:

Որպես անվտանգության միջոցի կիրառման պետք է դիտարկել ոչ միայն հասարակության, այլ նաև իր համար վտանգ ներկայացնելու հանգամանքը:

10. Բժշկական հսկողություն անվտանգության միջոցի կիրառման նկատմամբ նախնական դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանները չեն կարող քննարկել և արձանագրել անձի՝ իր կամ հասարակության համար հաստատապես վտանգ ներկայացնելու հանգամանքը: Քրեական վարույթի այս փուլում անձի նկատմամբ անվտանգության միջոցի կիրառման հարցը լուծելիս դատարաններն անձի վտանգավորության աստիճանը պետք է քննարկման առարկա դարձնեն հիմնավոր կասկածի

մակարդակով:

11. Ընտանեկան հսկողություն անվտանգության միջոցի կիրառման հիմքը պետք է պայմանավորել ոչ թե անձի՝ իր կամ հասարակության համար վտանգ չներկայացնելու, այլ այդ վտանգի ցածր աստիճանի հետ: Այդ պարագայում ընտանեկան հսկողությունը կդիտարկվի նաև որպես այլընտրանքային անվտանգության միջոց, որը կկիրառվի նվազ վտանգավորություն ունեցող անձանց նկատմամբ:

12. Եթե գործի նախաքննության ընթացքում, մինչև ԲԲՀՄ կիրառելու միջնորդությամբ դատարան դիմելը, քրեական վարույթն իրականացնող մարմնին հայտնի դառնա, որ անձն այլևս վտանգ չի ներկայացնում իր կամ հասարակության համար, ապա այդպիսի միջնորդություն ներկայացնելով գործը դատարան ուղարկվել չի կարող՝ անձի նկատմամբ ԲԲՀՄ-ի նշանակման անհնարինության պատճառով: Հետևաբար, ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի ապացուցման առարկան պետք է ներառի նաև անմեղսունակ անձի՝ իր կամ հասարակության համար վտանգ ներկայացնելու հանգամանքի պարզումը:

13. Անձի անմեղսունակությունը ՀՀ ՔԴՕ 35-րդ հոդվածի 1-ին մասում առանձին կետով՝ որպես քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու ինքնուրույն, ընդ որում՝ որպես ոչ ռեաբիլիտացիոն, հիմք նախատեսելու անհրաժեշտություն չկա: Միաժամանակ, անհրաժեշտ է գործող ՔԴՕ-ում վերաիմաստավորել ռեաբիլիտացիայի էությունը, որպիսի պայմաններում նաև անմեղսունակ անձի նկատմամբ հանցակազմի բացակայության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելիս և գործի վարույթը կարճելիս վերջինիս չի վերապահվի ռեաբիլիտացիայի իրավունք:

14. ԲԲՀՄ-ի կիրառման դատական վարույթի նախապատրաստման ընթացքում ՀՀ ՔԴՕ 40-րդ գլխով նախատեսված ընդհանուր բնույթի հարցերի հետ մեկտեղ գտնում ենք, որ ելնելով հատուկ վարույթի առանձնահատկություններից՝ պարտադիր ենթակա են լուծման նաև՝ անձի նկատմամբ կիրառված անվտանգության միջոցի հիմնավոր լինելու կամ չլինելու, անձի հոգեկան հիվանդության բնույթից և աստիճանից ելնելով՝ գործի քննությանը նրա մասնակցությունն ապահովելու, ինչպես նաև գործի քննության հրապարակայնության հետ կապված հարցերը: Միաժամանակ, ելնելով լուծման ենթակա հարցերի բնույթից՝ նշված գործերով նախնական դատալուծումների անցկացումը պետք է լինի պարտադիր:

15. Ինքնին փորձագիտական եզրակացության ձևակերպումն այն մասին, որ անմեղսունակ անձը «վտանգ է ներկայացնում իր և շրջապատի համար» չի կարող անվերապահ հիմք ընդունվել անձին իր վերաբերյալ ընթացող գործի դատական քննությանը մասնակցելուց զրկելու համար: Ուստի, ԲԲՀՄ-ի կիրառման վարույթում մրցակցության սկզբունքի երաշխավորման նպատակով անմեղսունակ անձինք որպես կանոն պետք է մասնակից դարձվեն գործի քննությանը՝ նրանց շահի պատշաճ ներկայացվածությունն ու պաշտպանվածությունն ապահովելու համար:

16. ԲԲՀՄ-ի կիրառման վերաբերյալ գործերով դատակոչի ենթակա անձանց ցուցակում պետք է պարտադիր ներառվեն գործի մինչդատական վարույթում եզրակացություն տված փորձագետները, որպեսզի պաշտպանության կողմն ունենա, որպես այդպիսին, ոչ միայն փորձագիտական եզրակացությունն ուսումնասիրելու և վիճարկելու իրավունք, այլ նաև եզրակացությունները նախապատրաստողների վստահելիությունն ուղիղ հարցաքննության միջոցով վիճարկելու իրավունք:

17. Եթե ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի շրջանակներում պարզվի, որ անձն արարքը կատարելու պահին եղել է մեղսունակ, ապա փոխակերպումն ընդհանուր հիմունքներով անցկացվող վարույթին չի կարող հանգեցնել նրա իրավունքների պաշտպանության խախտման՝ հաշվի առնելով, որ այդ պարագայում ընդամենը տեղի է ունենում անցում առավել բարձր երաշխիքներ պարունակող հատուկ վարույթից ընդհանուր բնույթի երաշխիքներ նախատեսող վարույթի:

18. Եթե ընդհանուր հիմունքներով անցկացվող վարույթի շրջանակներում պարզվի, որ անձն արարքը կատարելու պահին եղել է անմեղսունակ, ապա դատարանը գործի դատական քննության փուլում պետք է անցում կատարի իրավական երաշխիքների առավել բարձր նշածող ունեցող ԲԲՀՄ-ի կիրառման հատուկ վարույթին:

19. Եթե գործի նախաքննության կամ դատական քննության ժամանակ անձի մեղսունակությունը կամ իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ունակությունը պարզելու համար նշանակվել է դատահոգեբուժական փորձաքննություն, ապա դատարանը դատավճիռ կայացնելիս ևս մեկ անգամ քննարկելով այդ հարցը և գտնելով, որ անձը քրեական օրենքով արգելված արարքը կատարելիս գտնվել է անմեղսունակության վիճակում, կամ դրանից հետո հիվանդացել հոգեկան հիվանդությամբ,

անձի նկատմամբ չպետք է նշանակի ԲԲՀՄ: Մասնավորապես, ՀՀ ՔԴՕ 361-րդ հոդվածի պայմաններում ստացվում է, որ դատարանը կարող է առանց իրավական երաշխիքների ապահովման, նույնիսկ պաշտպանի բացակայությամբ, ընդհանուր հիմունքներով անցկացնել գործի դատական քննություն և վերադառնալ խորհրդակցական սենյակից՝ անձի նկատմամբ նշանակելով ԲԲՀՄ: Իրավական երաշխիքների ապահովման նպատակով գտնում ենք, որ գործնականում նշված կարգավորումը պետք է համադրված կիրառվի գործի դատական քննության վերսկսմանը վերաբերող ՀՀ ՔԴՕ-ի 363-րդ հոդվածի հետ: Այսինքն՝ մեր համոզմամբ, եթե խորհրդակցական սենյակում դատարանը հանգի այն հետևության, որ ամբաստանյալն արարքը կատարելիս գտնվել է անմեղսունակության վիճակում կամ դրանից հետո հիվանդացել է հոգեկան հիվանդությամբ, ապա դատարանը համապատասխան ծավալով պետք է վերսկսի գործի դատական քննությունը՝ ապահովելով ԲԲՀՄ-ի կիրառման՝ ՀՀ ՔԴՕ-ի 52-53-րդ գլուխներով նախատեսված լրացուցիչ իրավական երաշխիքները:

20. Գործող ՔԴՕ-ով նախատեսված՝ դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ ԲԲՀՄ-ի կիրառման գործերի կասեցման և անձի անձանց առողջացման դեպքում քրեական գործերի վերսկսման ընթացակարգն առաջացնում է անձի մեղավորության հարցի կրկնակի քննարկման շրջապտույտ, ինչը պարունակում է կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (*non bis in idem*) սկզբունքի, ինչպես նաև անձի հիմնարար իրավունքների և քրեադատավարական երաշխիքների խախտման վտանգներ: Նոր ՔԴՕ նախագծով այդ կապակցությամբ նախատեսվող լուծումները ևս արդյունավետ չեն, քանի որ անձին անվերապահորեն զրկում են արդար դատաքննության երաշխիքներից: Այդ պատճառով, որպես այլընտրանքային լուծում՝ առաջարկվում է հիմնարար իրավունքների երաշխավորմամբ դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց գործերով բացառել մեղավորության հարցի կրկնակի քննարկման շրջապտույտը՝ նախատեսելով նրանց բուժման առավել պարզեցված ընթացակարգ՝ անվտանգության միջոցի կիրառման միջոցով:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին անմեղսունակ անձանց մասնակցության ապահովման գործնական հիմնախնդիրները << քրեական դատավարությունում (ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու 1(1) 2018), ԵՊՀ հրատ., Երևան, 2018, էջեր 336-351,
2. Փորձաքննության նպատակով անձին բժշկական հաստատությունում տեղավորելու և կալանավորումը որպես խափանման միջոց միաժամանակ կիրառելու վերաբերյալ ձևավորված իրավակիրառ պրակտիկայի իրավաչափությունը (ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հոդվածների ժողովածու 1.2 (25)), ԵՊՀ հրատ., Երևան, 2018, էջեր 180-191,
3. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի առանձին տեսակների տարբերակման հիմնահարցերը (ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու 2(2) 2018), ԵՊՀ հրատ., Երևան, 2019, էջեր 310-326,
4. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման դատական վարույթի սահմանները// Դատական իշխանություն, նոյեմբեր-դեկտեմբեր, 2019, 11-12 (245-246), էջեր 73-82,
5. Անվտանգության միջոցների կիրառման իրավական երաշխիքները // Արդարադատություն 1(50), Երևան, 2020, էջեր 6-12,
6. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հայեցակարգային հիմունքները // Արդարադատություն 1(50), Երևան, 2020, էջեր 22-29,
7. Procedure for the Application of Medical Enforced Measures as a Special Type of Criminal Procedure // Դատական իշխանություն, հունվար-փետրվար, 1-2 (247-248), Երևան, 2020, էջեր 82-88,
8. Փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու հիմքերն ու պայմանները// Պետություն և իրավունք, 1 (86), Երևան, 2020, էջեր 71-77:
9. Քաղաքացիական հայցի քննությունը բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթում //Դատական իշխանություն, մարտ-ապրիլ, Երևան, 2020, էջեր 36-41:

YARDANYAN ARNOLD

THEORETICAL AND PRACTICAL ISSUES ON APPLICATION OF COERCIVE MEDICAL MEASURES IN CRIMINAL PROCEEDINGS OF RA

One of the primary challenges of a state based on the rule of law is the effective protection of the rights and legitimate interests of vulnerable groups of society. With the procedure of application of coercive medical measures (hereafter referred to as CMM) in criminal proceedings, the State has set forth a number of specific legal safeguards to protect people with mental health issues. However, the procedure of application of CMM, in the context of which imposed medical measures prevent the threat of persons with mental health problems and ensure the safety of other members of the public, in practice contains a number of issues.

It should be noted that the practice of application of CMM is almost not studied in the local literature, in essence there is no fundamental scientific work devoted to the specifications of that procedure, which on the one hand would reveal the theoretical foundations of special proceedings, on the other hand, would suggest systematic solutions to emerging problems in the practice of application of CMM. For this reason, there are currently uncoordinated solutions to some of the issues raised in the CMM proceedings, which in some cases endanger the rights and legitimate interests of persons with mental health problems.

In the context of aforementioned the thorough examination of the special process of application of CMM is of crucial importance.

The originality of this work is manifested in the fact that for the first time in domestic procedural jurisprudence an attempt has been made to study in complexity the theoretical and practical issues on application of CMM, based on both the Code of Criminal Procedure of RA and the Draft of the new Code, as well as comparative legal analysis of foreign legislation, theoretical opinions, the legal positions of the Constitutional Court of RA, case law of the Cassation Court of RA, European Court of Human Rights, RA judicial practice.

In particular, within the frames of the research there are discussed such issues as the aim of the special procedure of application of CMM, the

peculiarities of the two types of this procedure, grounds and conditions for initiating them in criminal proceedings of RA. For the first time at the level of dissertation the author discussed an issues of placement of a person in a medical institution for execution of expertise, grounds and conditions for application of security measures. The author also analyzes the main problems of procedural status of a person with mental health issues, as well as other problems related with the protection of his rights and fundamental freedoms guaranteed by international documents and domestic legislation.

Based on the analysis, the author came to a number of theoretical conclusions as well as made a range of recommendations concerning the improvement of criminal procedure legislation.

The fundamental standpoints of the thesis have been reflected in the scientific articles published by the author.

ВАРДАНЯН АРНОЛЬД

ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ ПРИНУДИТЕЛЬНЫХ МЕР МЕДИЦИНСКОГО ХАРАКТЕРА В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РА

Одной из основных задач государства, основанного на верховенстве права, является эффективная защита законных прав и интересов уязвимых групп общества. С использованием процедуры применения принудительных мер медицинского характера (в дальнейшем ПМХХ) в уголовном судопроизводстве, государства устанавливает ряд конкретных правовых гарантий для защиты людей с проблемами психического здоровья. Однако производства применения ПМХХ, в рамках которого принимаются медицинские меры для предотвращения угрозы от лиц с психическими расстройствами и обеспечения безопасности других представителей общества, на практике содержит ряд проблем.

Следует отметить, что практика применения ПМХХ практически не изучена в местной литературе, в сущности, нет фундаментальной научной работы, посвященной спецификациям этой процедуры, которая, с одной стороны, раскрыла бы теоретические основания специальной процедуры, с другой стороны, предложила бы систематические решения проблем возникающих в практике применения ПМХХ. По этой причине в настоящее время существуют несогласованные решения некоторых вопросов, поднятых в ходе производстве применения ПМХХ, которые в некоторых случаях ставят под угрозу законные права и интересы лиц с проблемами психического здоровья.

В контексте вышеизложенного тщательное изучение производства применения ПМХХ имеет важное значение.

Новизна данного исследования заключается в том, что, основываясь на действующем Уголовно-процессуальном кодексе РА и проекте нового кодекса, а также сравнительно-правовом анализе зарубежного уголовного законодательства, теоретических мнений, правовых позиций Конституционного суда РА, прецедентом праве Кассационного суда РА, Европейского суда по правам человека, судебной практики впервые в

отечественном праве делается попытка подвергнуть комплексному анализу теоретические и практические вопросы производства в применении ПМХХ.

В частности, в рамках исследования обсуждаются такие вопросы, как цель особой процедуры применения ПМХХ, особенности двух типов этой процедуры, основания и условия их возбуждения в уголовном процессе РА. Впервые на уровне диссертации автор обсудил вопросы помещения человека в медицинское учреждение для проведения экспертизы, основания и условия применения мер безопасности. Автор также анализирует основные проблемы процессуального статуса человека с проблемами психического здоровья, а также другие проблемы, связанные с защитой его прав и основных свобод, гарантированных международными документами и национальным законодательством.

На основании проведенного анализа автор пришел к ряду теоретических выводов, а также представил ряд рекомендаций относительно совершенствования уголовно-процессуального законодательства.

Основные положения диссертации нашли свое отражение в опубликованных автором научных статьях.